Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 363 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՆՈՐՔԻ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊՈԱԿ-Ի ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կենցաղային պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է ձեռք բերել պրոֆեսիոնալ լվացքատան սարքավորումներ՝ լվացքի մեքենաներ, չորանոց և գլանային արդուկ, տեղափոխել և տեղադրել այն «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	20,782,085 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի մայիսի 31-ից մինչև 2023 թվականի հուլիսի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի համար անհրաժեշտ պրոֆեսիոնալ լվացքատան սարքավորումների ձեռքբերում, տեղափոխում և տեղադրում «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի մայիսի 31-ից մինչև 2023 թվականի հուլիսի 31-ը, արժեքը՝ 20,782,085 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի համար ձեռք է բերվելու թվով 2 հատ լվացքի մեքենա, 1 չորանոց և 1 գլանային արդուկ, տեղափոխվելու և տեղադրվելու են «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում: Նախատեսվում է կատարել ոտնակների և սարքավորումների տեղադրման, էլեկտրամալուխների անցկացման և մալուխների միացման, ջրամատակարարման խողովակների անցկացման և միացման աշխատանքների իրականացում: Արժեքը՝ 20,782,085 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ